

## Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 4

### ՀՀ ԱՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

04 դեկտեմբերի 2012թ.

ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ և ՀՀ տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի ծրագրերի և զարգացման բաժնի առաջատար մասնագետ Սամվել Միքայելյանը:

Օրակարգում՝

1. ՀՀ Սյունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման և համայնքներում առկա խնդիրների մասին.  
/Ձեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Ա. Մարդյան/
2. „Համայնքային ծառայության մասին, ՀՀ օրենքի կիրարկման ընթացքի, համայնքապետարաններում հանձնման-ընդունման աշխատանքների արդյունքների և խնդիրների մասին .  
/Ձեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՎ վարչության պետ Ա. Ավետիսյան/
3. Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ատեստավորման, դպրոցների վարկանիշավորման գործընթացի հետ կապված խնդիրների մասին.  
/Ձեկուցող՝ մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Լ. Մարգարյան/
4. Տեղեկատվություն մարզի տարածքում 2012թ. աշնանային զորակոչի ընթացքի և առկա խնդիրների մասին.  
/Ձեկուցող՝ Գորիսի զինվորական կոմիսար Մ. Պողոսյան/

Մարզխորհրդի նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ «ՀՀ Սյունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների հավաքագրման և համայնքներում առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Աշոտ Մարդյանը:

Օրակարգի երկրորդ՝ «„Համայնքային ծառայության մասին, ՀՀ օրենքի կիրարկման ընթացքի, համայնքապետարաններում հանձնման-ընդունման աշխատանքների արդյունքների և խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ

Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ Սեյրան Ավետիսյանը:

Օրակարգի երրորդ՝ «Մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների ատեստավորման, դպրոցների վարկանիշավորման գործընթացի հետ կապված խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Լևոն Մարգարյանը:

Օրակարգի չորրորդ՝ «Տեղեկատվություն մարզի տարածքում 2012թ. աշնանային զորակոչի ընթացքի և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ Գորիսի զինվորական կոմիսար Մելիքսեթ Պողոսյանը:

Զեկուցումների շուրջ ելույթներով հանդես եկան Ագարակ քաղաքային համայնքի ղեկավար Մխիթար Զաքարյանը, Սյունիք գյուղական համայնքի ղեկավար Սամվել Սարգսյանը /զեկուցումները և ելույթները կցվում են/:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

**ՀՀ Սյունիքի մարզպետ**

  
**Ս. Խաչատրյան**

Կատ. Ս. Սահակյան  
Հեռ. (0285) 2-63-55